չկար, որ աղմուկ բարձրացնէր: Ամէնքը մատներով էին ուտում: Խօսում էր միայն առաջնորդը: Նա գովում էր իր խոհարարին, թէ նա Պոլսում այսինչ եւ այնինչ նշանաւոր փաշաների տներումն է ծառայել եւ հազիւ թէ ամբողջ Վանի մէջ նրա հատը կը գտնոի: Վերջին խօսքը բաւական վիրաւորական լինելով փաշայի հարուստ խոհանոցի պատոին, նա էլ սկսեց գովաբանել իր խոհարարին, մի զարմանալի օրինակ բերելով նրա արհեստից, թէ նա հաւը այնպէս է պատրաստում, որ բոլոր ոսկորտիքը միջից դուրս է հանում, իսկ հաւը դարձեալ մնում է ամբողջ: Գուցէ այդ վիճաբանութիւնը երկուսի մէջ երկար տեւէր, եթէ Սիմոն պատոելին իր երգեցիկ խումբի հետ ներս չմտնէր: Նա այս գիշեր բաւական զարդարուած էր: Իր սովորութեան հակառակ, նա հագած ունէր մի բոլորովին նոր լոացուած շապիկ: Սիմոն պատոելիի այդ նշանաւոր շապկի պատմութիւնը ինձ համար աւելի հետաքրքրական լինելով, ես թողնում եմ առաջնորդի ճոխ սեղանի նկարագրութիւնը: Պէտք չէ մոռանալ, որ պատոելի ունէր մի հատ շապիկ միայն եւ այդ լոացւում էր տարոայ ընթացքում մի կամ երկու անգամ, այն եւս մեծ տօների ժամանակ, թէեւ լոացքը նրան ոչինչ չարժէր, որովհետեւ տալիս էր իր աշակերտներից մէկին, եւ նա իր մօրը լոանալ էր տալիս: Բայց Սիմոն պատոելիի կարծիքով, երբ շապիկը յաճախ էր լոացւում, նա խիստ շուտով էր մաշւում: Արդեօք ա՞յդ էր, որ նրան առիթ էր տոել զանց առնել մաքրութեան գլխաւոր պայմանը, թէ նա առհասարակ մաքրասէր չէր, այդ դժուար է լուծել: Միայն նրա տնտեսագիտութիւնը այդ կէտից պէտք էր սխալ համարել. իրաւ է, շապիկը յաճախ լոացոելով շուտով է մաշում, բայց, կեղտի մէջ մնալով, բոլորովին փտում է: Այդ էր պատճառը, որ Սիմոն պատոելիի շապիկը լոացոելուց յետոյ միշտ կարօտ էր կարկատանների: Երբ մօտենում էր մեծ տօնը, երբ անբախտ շապիկը տարւում էր աշակերտի մօր տունը, մինչեւ նրա վերադարձը, որ երբեմն երկար էր տեւում, Սիմոն պատոելին իր կուրծքը սովորաբար ծածկում էր քթի գունաւոր թաշկինակով, որի ճոթերը կապած էին լինում վզի ետեւից, ծոծրակի վրայ: Այդ տեսնում էին աշակերտները, տեսնում էին եւ աշակերտների ծնողները: Գուցէ դրանից ծագեց այն հանգամանքը, որ Սիմոն պատոելիի շապկի լոացումը դպրոցի ժամանակագրութեան մէջ մի առանձին տեղ էր բռնում: Նրա աշակերտների լեզուում կազմոել էր մի այդպիսի սրախօսութիւն՝ ամէն մի վաղաժամանակեայ դէպքի մասին ասել. «Այդ անցքը շատ հին է եւ այնքան հին, որ Սիմոն պատոելին իր շապիկը դեռ նոր էր լոանալ տոել»: Այժմ, կարծեմ, հասկանալի է, թէ Սիմոն պատոելին որքան մեծ յարգանք ունէր դէպի առաջնորդի դահլիճը, որ ներկայացել էր այնտեղ լոացուած շապիկով: Երեսը խնամքով ածիլած էր եւ երեւի շտապելուց մի քանի տեղ ածելին կտրել էր: Կտրած տեղերի վրայ բամբակ էր կպցրած: Սիմոն պատո-